

ՍՈՒՐԷԱՆԴԱԿ ԲԻԻԶԱՆԴԻԱՆ.

ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆ ԵՐ.

(Բ. Բաժնի Տնօրէն)

Ուստի և ազգի մը զեկը իւր ձեռքը բռնող մարդը, եթէ մէկ աչքով իրեն ներկայացնալ խընդ-րոյն լաւ կողմը, միւս աչքովն ալ չար կողմը դի-տելու է. Սակայն Խրիմեան միշտ լաւ կողմին կը հակի. ապացոյց է ըսածնուս՝ զինուորատու-թեան խնդրոյն մէջ, Արօնական Ժողովոյ պայու-թեան խնդրոյն մէջ և սա Աթոռիկոսական խընդ-րոյն մէջ՝ յայտնած բանաստեղծական կարծիք-ներն, մինչդեռ այս երեք խնդրոյն մէջ ալ բա-ցարձակ կերպով տեսնուեցաւ թէ՛ որքան սուղի պիտի նստէին ազգին՝ եթէ ազգն այդ լսնաստեղ-ծական կարծեաց շարքուցիւ բառերուն հետեւը.

Բայց զեռ տատնք սկիզբն էին երկանց.

Ղեռ խնդիրներ կան որոշելի. դեռ հնութիւն-ներ կան տապալելի, դեռ ճամբաներ կան ի մի ձուլումն առաջնորդելի. ուրեմն նոր «բան», մը նոր շաւիղ մը պէտք էր ձեռք առնել և ահա դրան զայդ, որ է հետեւեալ ամբաստանութիւնը թէ, աստնք՝ (ազգին շահը և ապագայ վտանգները ցուցնողները) Խրիմեանը հրաժարացնել կուզեն.

Ասով կրնան բանաստեղծութեան սիրահա-րը խաբել, բայց ազգին շահը մտածողները չեն արող խաբել. այսու ամենայնիւ ալ չեն կարող զԽրիմեան գործիք ընել իրենց ձեռքը և կանգուն պահել զայն.

Մեք անկեղծօրէն խօսելով մէկ քանի խօսք կուզենք ընել.

Հայրիկ, ալ բաւ սեպէ երկու տարիէ ի վեր Բ. Դրան պաշտօննայ ազգայնոց խրատներուն անսա-լով. քիչ մ'ալ Հասարակութեան դարձիր. քիչ մ'ալ պարզ Հայերուն դարձիր. քիչ մ'ալ ան-ցնայդ միտքդ ընր. յիշէ թէ ո՛վ զԲեզ այդ զահը բարձրացուց և ինչո՞ւ համար բարձրացուց. Գու նախորդներդ միայն Պատրիարքարանի մէջ ա-տոնցմով պաշարեալ էին, դու գիշերով ցորեկով նըզինքդ ատոնց նուիրեցիր, ատոնց տուններն քու տունդ ըրիր. քու նախորդներդ եկեղեցիները կը

պտրտէին գոնէ տարին մէկ մէկ օր, դու այդ ալ ըրած չունիս. քու նախորդներդ այդ միջոցաւ գէթ՝ հասարակաց կարծիքը մօտէն կըշօյափէին. դու այդ կարծեաց դէմ ալ ականջդ զոցեցիր. ձեր նախորդները իրենց կարգակիցներով կը բոլոր-ուէին, անոնց հետ կը խորհէին, կը խորհրդակ-ցէին ու կը գործէին, իսկ Գուք անոնց ալ երեսը նայած չունիք. մէկ քանի անգամ ամենքը մէկանց հրաւիրեցիր, բայց անկէ ալ յուսահատեցաք. Ձեր նախորդները եկեղեցական խնդիրը եկեղեցա-կաններով կը տնօրինէին, դուք էֆէնտիներով կը տնօրինէք. ահա երուսաղէմայ մեծ խնդիրն, ահա Սոյ կաթողիկոսութեան խնդիրն և ահա հիմայ ալ Էջմիածնայ Աթոռիկոսութեան խնդիրը. ձեզ մեծ գործեր տեսած ըլլալու փառասիրու-թեան կը շողոքորթեն, դուք ալ պարզմտաբար կը խաբուիք առանց զիտնալու թէ՛ ձեզ համար ամենէն մեծ գործը հնութիւնները իրենց վիճակին մէջ պահելն է. հաւատացէք Հայրիկ, թէ ներկայ պահուս մէջ մեր հնութիւնները իրենց վիճակին մէջ չը պահելու ուխտեալ ամենահզօր մարմիններ կան գաղտնի. հաւատացէք թէ ի մի ձուլումն յառաջ վարելու համար, միմիայն պէտք եղած բանը հնութիւնները քանդել և րնաջինջ ընելն է. հաւատացէք թէ Ձեր բազմած աթոռն իսկ հնու-թիւն մ'է. եթէ հնութեանց հաւատարիմ չըլլաք, ձեր աթոռն ալ վտանգի տակ է. մէկ խօսքով, խաւարեալ եղէք քաղաքականութեան առջև, իսկ լուսաւորեալ եղէք Ազգային կենաց ընթացքին մէջ. ոչ կարեմք ըսէք էֆէնտիներուն՝ բայց ամենակա-րող եղիք ազգային յառաջդիմութեան արգելք-ները բառնալու. Պապութիւնը եթէ սխալ մը ունեցաւ, ամեն բանի առջև անխտիր «ոչ կարեմք», ի հետեւին է. եթէ Պապը իւր Ժողովուրդեան խիստ մեծ մասը կորսնցուց, Ժողովուրդեան դէմ «ոչ կա-րեմք», ըսելուն համար է. իսկ եթէ դեռ իւր Ա-թոռը կը պահէ և տէրութեանց առջև քիչ շատ պատկառելի դիրք մը ունի, քաղաքագիտաց դէմ «ոչ կարեմք», էն մազիւ չափ չը շեղելուն շնոր-հիւն է, ուստի դարձեալ կրտեմք, Ժողովուրդեան համար ամենակարող եղիք, իսկ էֆէնտիներու համար, «ոչ կարեմք», մը. Երուսաղէմայ Պատ-իրարքը եթէ իր բոլոր ուժովը, ՈՁ ԱՆԸԻՄԻՄ մը

չը ձևանար, Լատինը շատոնց մեր վանքը՝ յափշտակած էին. գիտեմ՝ գէշ դադարաբար ունիք Կոչկարեմք, ին՝ վրայ, բայց համազունցէք թէ՛ դանակն ալ սիրելի գործիք մը չէ, այսու ամենայնիւ ունի իւր օգտակար ծառայութիւններն. Յունաց Պատրիարքն Պաւլարաց խնդրոյն մէջ իրաւունք չունեցած ըլլալը չը գիտնալու չափ աղայ չէ. բայց տես ինչպէս իր բոլոր ուժովը ոչ կարեմքին և տիւեղիական ժողովոյ պլլուելի է. Լատիլ ըսել չեմք ուզեր թէ՛ Տէրութեան դէմ՝ դժուարութիւններ յարուցէք. ըսաւ. տէրութիւնը մեր իրաւանց մասին բան մը անգամ ըսած չէ, որ դուք ալ անոր դէմ՝ դժուարութիւններ հանելու ստիպուիք, այլ մեզնէ անոնք, որք մեր հնուութեանցը կը դաշին և քաղաքագէտ կը ձևանան, անոնց նկատմամբ է խօսքս:

Էֆէսոսիւնիւ մէջ ազգասէրներ ալ կան, բայց կարող չեն շեղ իրենց զգացումն յայտնել, վասն զի իրարմէ կը վախնան. ասոնց մէջ անանկներ կան, որ նոյն իսկ Ձեր իրենց հետ մտերիմ բարեկամ ըլլալն չեն ուզեր. բայց չեն կրնար ալ քաղաքաւարութեան դէմ մեղանշել. Դուք կը հասկնաք մեր զորոնք ակնարկել ուզելիւ Լնուն տալ չենք ուզեր:

Ե՛հա մեր վերջին խօսքը այս է. Դուք ժողովրդեան մարդ էիք, Պատրիարք ընտրուելնէդ ի վեր մեծատանց մարդ եղաք. դարձէք դարձեալ ձեր առջի վիճակը և ժողովրդեան մարդ եղիք. մեծատունները Ձեզ՝ կրը պատրիարքութենէ իյնաք՝ կը թողուն, ինչպէս թողուցած են շատերը. իսկ ժողովուրդը միշտ Ձերն է և Դուք ժողովրդեան, ժողովուրդով Պատրիարք եղաք, ժողովրդեան Պատրիարքը եղիք. Ձեզ ընտրողները՝ կը կրկնեմք հոս, մեծատունները չէին, ժողովուրդն էր. Սիւր բարձրացուցիք, Էջմիածինը նուազագոյնցած եղաք. պատմութեան առջև, ժողովրդեան առջև պատասխանատու էք. Էջմիածնայ . . . ծաղրողներուն դէմ լուռ կեցաք. դարձեալ պատասխանատու էք. Էջմիածնայ կաթողիկոսին կոնդակները երևան չը հանեցիք ու պահեցիք. դարձեալ պատասխանատու էք. գիտցիք որ՝ Էջմիածինը նուազացնել որչափ ազգին ձեռքն է՝ զայն բարձրացնելը ազգին ձեռքը չէ այնչափ. Դուք մենէ

աղէք գիտէք թէ՛ անոր անունը մեր Ս. պատարագին մէջ ասկից 30 տարի առաջ ինչ ազդեցութեամբ և որչափ դժուարութեամբ կրցաւ յիշուիլ. վերք մ'է այս յաղթանակը ունեց սրտին վրայ, այս վերքը Ձեր ձեռքովը բուժելու ձեռնարկած են. Ձեզ բոլորովն փոխած են. կրնաք դարձեալ դադրեցնել տալ այդ յիշատակութիւնը, բայց չէք կրնար դադրեցնելէդ վերջը դիւրութեամբ նորէն շարունակել տալ:

Աւտի Հայրիկ. Ձեզ Պատրիարքութենէ ձրգելու մարմինը Ձեր շուրջը և Ձեր գործոցը մէջ փնտոնեցէք. վասն զի եթէ ընդհանուր քուէարկութեամբ Եզգին դիմէք թէ՛ Հայրիկը կուղէք՝ թէ՛ Էջմիածինը. — Եզգը՝ Հայրիկն ալ կուզենք, Էջմիածինն ալ կուէ իսկ եթէ Դուք Էջմիածինն բաժնուիք ու առէք զայն՝ այն ատեն վստահ եղիք թէ՛ Հայրիկին վրայ կը ցաւիք. իսկ Էջմիածինն չենք բաժնուիք կրտսն և վերջապէս Էջմիածնայ համար կրնաք զո՛հ երթալ. հետեւարար զորոշ կեցիք այն Աթոռին դաշելէ. միշտ երբ Սիս և Էջմիածին բառերն լսէք՝ մի բանաստեղծաբար խորհիք, այլ խնդրոյն գէշ և քաղաքագիտական կողմերն աչքի առջև ունեցէք. զի ասոնք Ձեր ձեռքով բաժանման հիմը կը ձգեն, ազգատեաց մէկ յաջորդնուդ ձեռքով չէնք կը շինեն. մի վերջապէս անձերնուդ վստահէք. այլ վստահեցէք՝ հնութեանց ձեռք չը գաշելու դրութեան. զի հոն է ազգին և Ձեր աթոռոյն շահը. Երապիլ:

ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

Յառաջակայ Յունիս ամսոյ սկիզբները Վ. Ե. Հափառ և Սրբազնագոյն Հայրապետ ամենայն Հայոց պէտք է երթայ ի վանան Հառիճոյ՝ որ ի Խիչաղ՝ օգափոխութեան համար: